ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«8» հոկտեմբերի 2021 թվականի N 787-Ա

## ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՎԱՐ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի առաջին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 784-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքում հողամասերի աճուրդը կազմակերպելու նպատակով ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ կազմով.

Պետրոսյան Ռոբերտ - համայնքի ղեկավար, աճուրդի կազմակերպիչ,
Սանթրոսյան Նորայր - համայնքի ղեկավարի տեղակալ,
Թադևոսյան Սուսաննա - աշխատակազմի քարտուղար,
Հովհաննիսյան Սոնա - ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ,
Խաչատրյան Կարեն - Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար,
Գևորգյան Նորիկ - Զովք գյուղի վարչական ղեկավար,
Գրիգորյան Հուսիկ - աշխատակազմի գլխավոր մասնագետ,
Մկրտչյան Գարիկ - համայնքի ավագանու անդամ:

2. Աճուրդի վարման համար աճուրդավար նշանակել հանձնաժողովի անդամ Նորայր Սանթրոսյանին, արձանագրող՝ հանձնաժողովի անդամ Սուսաննա Թադևոսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 8
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«8» հոկտեմբերի 2021 թվականի N 786-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Նվարդ Էդուարդի Խաչատրյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Նվարդ Էդուարդի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 1/5 հասցեի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքից բաժանված 0,1 հա մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Լուսավորության փողոցի թիվ 1/8, 0,45345 հա մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Լուսավորության փողոցի թիվ 1/5:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նվարդ Էդուարդի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 8
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» հոկտեմբերի 2021 թվականի N 785-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.***

Քաղաքացի Արթուր Զավենի Խաչատրյանը՝ հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2021 թվականի սեպտեմբերի 7-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով և 34-րդ հոդվածով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել էր վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

***Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

Համաձայն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 7-ին տրված N 243686975632124029 տեղեկանքի՝ Արթուր Զավենի Խաչատրյանը Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է նախորդ տարիների հարկային պարտավորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արթուր Զավենի Խաչատրյանի նկատմամբ 2021 թվականի սեպտեմբերի 7-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:
4. Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Արթուր Զավենի Խաչատրյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» հոկտեմբերի 2021 թվականի N 784-Ա

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման, ***որոշում եմ.***

1. Հաստատել՝

1) Ջրվեժ համայնքի աճուրդի կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Աճուրդային կարգով հողամասերի օտարման վերաբերյալ մամուլում տրվող հայտարարության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 7
գ. Ջրվեժ

Հավելված N 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2021 թվականի
հոկտեմբերի 7-ի N 784-Ա որոշման

## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Ջրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդի կազմակերպման ու անցկացման հետ կապված գործընթացները և հողամասերը աճուրդային կարգով օտարման աշխատանքների կազմակերպումն իրականացվում է Հողային օրենսգրքի, Քաղաքացիական օրենսգրքի, «Հրապարակային սակարկությունների մասին օրենքի», Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման և սույն կանոնակարգին համապատասխան:

2.Աճուրդի կազմակերպիչը համայնքի ղեկավարն է: Հողամասի աճուրդը կազմակերպելու համար աճուրդի կազմակերպիչն իր իրավասության շրջանակում ստեղծում է աճուրդային հանձնաժողով առնվազն 7 անդամով: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ: Աճուրդի կազմակերպիչը աճուրդային հանձնաժողով ստեղծելու որոշմամբ հանձնաժողովի կազմից նշանակում է աճուրդավար և արձանագրող: Աճուրդային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ: Աճուրդի արձանագրությունը ստորագրում են աճուրդային հանձնաժողովի անդամները, աճուրդում հաղթող ճանաչված անձը, ցանկության դեպքում՝ աճուրդի մյուս մասնակիցները: Արձանագրությունը և աճուրդի փաստաթղթերի փաթեթը պահպանում է աճուրդը կազմակերպող համապատասխան մարմինը:

3.Հողամասերն աճուրդային կարգով օտարվում են դասական աճուրդով:

4.Սակարկությունների մասնակից կարող են դառնալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքը:

5.Սակարկությունների մասնակից չեն կարող լինել այն անձինք, որոնք սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

6.Աճուրդի մասին հայտարարության (հրապարակային ծանուցման) տեքստը հաստատում է աճուրդի կազմակերպիչը:

## II. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

7.Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայքէջում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև համայնքի պաշտոնական կայքէջում հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, չափերը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը, օգտագործման նպատակը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:

8. Աճուրդի կազմակերպիչը պետք է աճուրդի կայացման վայրում ցուցատախտակի վրա զետեղի աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

9. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով սահմանված կարգով:

10. Աճուրդին, աճուրդի կանոնակարգով նախատեսված կարգով, կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք (այսուհետ՝ դիտորդ), ովքեր վճարել են մուտքի վճարը:

11. Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար սահմանվում է 5 000 (հինգ հազար) դրամ մուտքի վճար:

12.Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման վայրում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

13. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:

14. Աճուրդի մասնակիցներին մասնակցի վկայականներ (կցվում է՝ Ձև N 3), տրամադրելը, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող (դիտորդ) անձանց տոմսերի (կցվում է՝ Ձև N 4) վաճառքը պետք է դադարի աճուրդի բացումից առնվազն երեսուն րոպե առաջ, եթե աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

## III. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

15.Քաղաքացիները հետաքրքրող հողամասի վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ Ջրվեժի համայնքապետարանում: Հայտի ձևը, աճուրդի կանոնակարգը, համայնքի ղեկավարի համապատասխան որոշումը, հրապարակային ծանուցումները մատչելի և տեսանելի ձևով տեղակայված են համայնքապետարանի երկրորդ հարկում, հանձնաժողովի համար առանձնացված սենյակում:

16.Հայտի ձևին, աճուրդի կանոնակարգին ծանոթանալուց հետո, քաղաքացիները կարող են դիմել հանձնաժողովին՝ հետաքրքրող առանձին հողամասերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար:

17. Քաղաքացիների մուտքը հայտերի ընդունման համար առանձնացված սենյակ, ազատ է:

18.Քաղաքացիների ցանկության դեպքում աճուրդի կազմակերպչի կողմից նրանց տրամադրվում է աճուրդի կանոնակարգի և հետաքրքրող հողամասի աճուրդային փաթեթը:

19. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1) հայտ (Ձև N 1).
2) մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր.
3) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:

20.Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը կատարվում է Ջրվեժի համայնքապետարանում, արձանագրողի կողմից, հասցեն՝ Մելքոնյան փողոց թիվ 76, հեռախոսահամար՝ 010-684929:

21.Հայտերն ընդունվում են բացառապես սույն կանոնակարգում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը $9^{00}$-ից $18^{00}$ (ընդմիջում՝ $13^{00}$-$14^{00}$):

22.Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը կատարվում է աճուրդի մասնակիցների գրանցամատյանում՝ (Ձև N 2) և դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

23.Աճուրդի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը սույն կանոնակարգով սահմանված հողամասի սեփականության իրավունքի սուբյեկտ չէ:

24. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

25.Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք մուծում են նախավճար՝ աճուրդի մասին ծանուցման մեջ սահմանված չափով, ժամկետներում և կարգով՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով:

26. Նախավճարը մուծվում է աճուրդի կազմակերպչին: Նախավճարը կարող է վճարվել կանխիկ, եթե կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:

27.Նախավճարը վճարվելու դեպքում աճուրդի կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական՝ Ձև N 3, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:

28.Աճուրդի մասնակից չհամարվող անձանց կողմից կանոնակարգով սահմանված մուտքի վճարը վճարելու դեպքում տրվում է տոմս՝ Ձև N 4, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպչի անվանումը, վճարված մուտքի վճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:

## IV. ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

29.Աճուրդն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, ինչպես նաև գրանցված անձինք և աճուրդի մասնակից չհամարվող անձինք: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդի գործընթացին մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

30.Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր:

31.Աճուրդն սկսելու պահից դահլիճ մտնելն արգելվում է:

32.Աճուրդը սկսվում է, եթե մասնակիցների թիվը մեկ կամ ավելի է:

33.Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

34.Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը:

35.Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իրեն տրված մասնակցի վկայականը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին:

36.Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, բարձրացնել իրեն տրված մասնակցի վկայականը և ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման չափով, այն է՝ գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով՝ քայլի չափից ոչ պակաս գումարով:

37. Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

38. Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

39. Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:

40. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով՝ աճուրդային հանձնաժողովն արձանագրում է միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառածալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

41. Աճուրդի անցկացման այլ ընթացակարգային պայմանները կարող են նախատեսվել աճուրդի մասին կանոնակարգով, որի դրույթներին կազմակերպիչը պարտավոր է մասնակիցներին ծանոթացնել նախքան աճուրդի սկսվելը:

42. Լոտի (լոտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

43. Ինչպես սակարկությունների արդյունքների, այնպես էլ աճուրդը չկայանալու դեպքում կազմվում են համապատասխան արձանագրություններ՝ համաձայն սույն կանոնակարգի NN 5, 6 և 7 ձևերի:

## V. ԼՈՏԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

44.Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցն աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելու օրվանից տասն օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի գինը՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Եթե նշված ժամկետում գինը չի վճարվում, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց, այնպես էլ առուվաճառքի պայմանագիր կնքելուց, ապա համարվում է, որ հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց:

45.Աճուրդի կազմակերպիչը նախավճարը՝ աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, մասնակցների գրավոր դիմումի հիման վրա, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

46.Հաղթողի կողմից գումարն ամբողջությամբ վճարվելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

47. Աճուրդում հաղթած և հողամասը գնելուց հրաժարված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում:

48.Աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդի մասնակցության համար հայտ չի ներկայացվել, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում:

49. Աճուրդի չկայացման մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

50. Առաջին անգամ աճուրդը չկայանալու դեպքում երկրորդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով ու ժամկետներում, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի, որն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակայնությունը:

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2021 թվականի
հոկտեմբերի 7-ի N 784-Ա որոշման

| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ<br>Ջրվեժի համայնքապետարանը հայտարարում է համայնքային և (կամ) պետական սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի<br>*դասական աճուրդ* | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Հողամասի հասցեն (գտնվելու վայրը) Ծածկագիրը | Մակերեսը քառ.մետր | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակում-ների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը | Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահա-ղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ | Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները, հողատեսքը* | Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները | Մեկնար-կային գինը (դրամ) | Նախա-վճարը (դրամ) | Քայլի չափը (դրամ) |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց 76:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ջրվեժի համայնքապետարան (Մելքոնյան փողոց 76, 2-րդ հարկ, հեռախոս՝ 010-684929):

Աճուրդը կայանալու է 202.... թ. ..........................-ին ժամը.........-ին, Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 202.... թ. ...............................-ը, ժամը...........-ը:

* Սյունակը լրացվում է գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի դեպքում:

*Ձև N 1*

# Հ Ա Յ Տ
## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ՝ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

______________________________________________________________

(հայտը ներկայացնող քաղաքացու կամ իրավաբանական անձի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը, հասցեն)

______________________________________________________________

1.Ծանոթանալով 202____թվականի ________________-ին Ջրվեժ համայնքում կայանալիք աճուրդում ______________________________________________ համար վաճառվող հողամասերի մասին հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում եմ մասնակցել աճուրդին և գնել ______________________________________________ հողամաս _______ հա մակերեսով:

______________________________________________________________

______________________________________________________________

2. Աճուրդի արդյունքում հողամաս գնելու դեպքում պարտավորվում եմ 10-օրվա ընթացքում կնքել առուծախի պայմանագիր:

3. Տեղյակ եմ, որ պայմանավորված գումարը 10 օրվա ընթացքում չմուծելու կամ սահմանված ժամկետում պայմանագիրը չկնքելու դեպքում նախավճարը չի վերադարձվելու:

Դիմող՝ ______________________________________________________

(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

______________________________________________________________

Անձնագիր ____________________________________________________

(համարը, երբ և ում կողմից է տրված)

Հայտն ընդունված է 202___ թվականի ___________________________-ին

Ընդունող ____________________________________________________:

(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

______________________________________________________ **Կ.Տ.**

(կտրման գիծ)

Հողամասերի՝ աճուրդով վաճառքի մասին հայտն ընդունված է 202___ թվականի ________________-ին և գրանցված է հայտերի հաշվառման մատյանի ___________համարով:

Ընդունող ____________________________________________________:

(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

(կտրոնը հանձնվում է դիմողին)

Կարված և կնքված է

*Ձև 2*

Ջրվեժ համայնքի ղեկավար՝

______________________ Ռ.Պետրոսյան

«_____» __________________________ 202 թ.

Ընդամենը՝ ________ թերթ

Կ.Տ.

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Աճուրդի կազմակերպիչ՝

Ջրվեժի համայնքապետարան

Արձանագրող՝

______________________________________
(ստորագրություն)

Ձև 2

## ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

| Հ/Հ | Հայտերի ընդունման | | Մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը (անվանումը) | Անձնագրի տվյալները | Հողամաս(եր)ի հասցեն (գտնվելու վայրը) Ծածկագիրը | Մասնակցության վճարի անդորրագրի համարը | Հայտը գրանցողի ստորագրությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ամսաթիվը | ժամը | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

*Ձև N 3*

**ՎԿԱՅԱԿԱՆ N _____**
**ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԻ**

Աճուրդի կազմակերպիչ - Ջրվեժ համայնքի ղեկավար

Աճուրդի կայացման ամսաթիվը և ժամը _____ __________________ 202___ թ. ժամը _________

Աճուրդի կայացման վայրը (հասցեն) - Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց - 76, Ջրվեժի համայնքապետարանի վարչական շենք, 2-րդ հարկ, համայնքի ղեկավարի աշխատասենյակ)

Աճուրդի մասնակցի անունը, հայրանունը և ազգանունը ________________________________

Վճարված մասնակցության վճարի չափը (դրամ) ________________________________

Վճարված նախավճարի չափը (դրամ) ________________________________

Աճուրդի կազմակերպիչ ________________________________ Ռ. Պետրոսյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

*Ձև N 4*

**ՏՈՄՍ**
**ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ**
**(ԴԻՏՈՐԴԻ)**

Աճուրդի կազմակերպիչ - Ջրվեժ համայնքի ղեկավար

Աճուրդի կայացման ամսաթիվը և ժամը _____ __________________ 202___ թ. ժամը _________

Աճուրդի կայացման վայրը (հասցեն) - Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց - 76, Ջրվեժի համայնքապետարանի վարչական շենք, 2-րդ հարկ, համայնքի ղեկավարի աշխատասենյակ)

Դիտորդի անունը, հայրանունը և ազգանունը ________________________________

Տոմսի արժեքը - __________ դրամ

Աճուրդի կազմակերպիչ ________________________________ Ռ. Պետրոսյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

***Ձև N 5***

«Հաստատում եմ»

Ջրվեժ համայնքի ղեկավար

Ռոբերտ Վիգենի Պետրոսյան

(անունը, հայրանունը, ազգանունը)

______________________

(ստորագրությունը)

Կ.Տ.

«_____» ______________ 202___ թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___**
**ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«_____» ______________ 202___ թ.

1.Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն ______________________________

______________________________

2.Հողամասն աճուրդով վաճառելու մասին համապատասխան որոշման համարը և տարեթիվը ________

______________________________

3.Աճուրդի մասնակիցների թիվը ______________

4.Վաճառվող հողամասի համարը, ինդեքսը ______________

5.Նախավճարի չափը (հազ.դրամ) ______________

6.Հողամասի մեկնարկային գինը (հազ.դրամ) ______________

7.Աճուրդային քայլի չափը (հազ.դրամ) ______________

8.Աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը (հազ.դրամ) ______________

9.Գնորդի տոմսի համարը ______________

10.Գնորդի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրային տվյալները, իրավաբանական անձի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը ______________________________

______________________________

Գնորդ՝ ______________
(ստորագրությունը)

Աճուրդի կազմակերպիչ ______________ (ստորագրությունը) ______________ (անունը, հայրանունը, ազգանունը)

Արձանագրող ______________ (ստորագրությունը) ______________ (անունը, հայրանունը, ազգանունը)

Անդամներ ______________ (ստորագրությունը) ______________ (անունը, հայրանունը, ազգանունը)

(գրանցվում է աճուրդի կայացման օրը՝ ըստ աճուրդի արդյունքների)

Ձև N 6

«Հաստատում եմ»

Ջրվեժ համայնքի ղեկավար

Ռոբերտ Վիգենի Պետրոսյան

(անունը, հայրանունը, ազգանունը)

_______________________

(ստորագրությունը)

Կ.Տ.

«______» ______________ 202___ թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ՝ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«______» ______________ 202___ թ.

Աճուրդի անցկացման տարեթիվը «______» ______________ 202___ թ.

Անցկացման վայրը՝ ________________________________________

Աճուրդի հանված հողամասերի թիվը և մակերեսը ____________________

Աճուրդի մասնակիցների թիվը ____________________

Վաճառված հողամասերի թիվը և մակերեսը ____________________

Նախավճարի ընդհանուր գումարը (հազ.դրամ) ____________________

Աճուրդից հետ վերադարձվող նախավճարի չափը (հազ.դրամ) __________

### ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| N/N ը/կ | Հողամասի օգտագործման նպատակը | Հասցեն | Վաճառքի գինը (հազ.դրամ) | Տեղեկություններ գնորդի մասին | Վճարումների կարգը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |
| | | | | | |

Աճուրդի կազմակերպիչ ____________________ ________________________________

(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Արձանագրող ____________________ ________________________________

(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Անդամներ ____________________ ________________________________

(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

(գրանցվում է աճուրդի կայացման օրը՝ ըստ աճուրդի արդյունքների)

Ձև N 7

«Հաստատում եմ»

Ջրվեժ համայնքի ղեկավար

Ռոբերտ Վիգենի Պետրոսյան
(անունը, հայրանունը, ազգանունը)

_______________________
(ստորագրությունը)

Կ.Տ.

«______» _______________ 202___ թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
# ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«______» _______________ 202___ թ.

«______» _______________ 202___ թվականին կայացած աճուրդի արդյունքներով հետևյալ հողամասերի աճուրդը համարվում է չկայացած՝

| N/N ը/կ | Հողամասի օգտագործման նպատակը | Հասցեն | Վաճառքի գինը (հազ.դրամ) | Աճուրդում առաջարկված առավելագույն գինը (հազ.դրամ) | Աճուրդի չկայացման պատճառները |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |
| | | | | | |

Աճուրդի կազմակերպիչ ________________ __________________________
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Արձանագրող ________________ __________________________
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

Անդամներ ________________ __________________________
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

(գրանցվում է աճուրդի կայացման օրը՝ ըստ աճուրդի արդյունքների)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» հոկտեմբերի 2021 թվականի N 783-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Քրիստինե Հակոբի Հակոբյանին տալ երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 36–րդ փողոցի թիվ 33 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Քրիստինե Հակոբի Հակոբյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Քրիստինե Հակոբի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» հոկտեմբերի 2021 թվականի N 782-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Սամվել Վարդգեսի Թառոյանին և Գայանե Ռաֆիկի Բակլաջյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0329-0057 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ տնտեսական շինության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սամվել Վարդգեսի Թառոյանին և Գայանե Ռաֆիկի Բակլաջյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» հոկտեմբերի 2021 թվականի N 781-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի երկրորդ մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Լիանա Մուշեղի Գրիգորյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 36-րդ փողոցի թիվ 15 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ իրականացրել է բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ, ***որոշում եմ.***

1.Լիանա Մուշեղի Գրիգորյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Լիանա Մուշեղի Գրիգորյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

3.Պարտավորեցնել քաղաքացի Լիանա Մուշեղի Գրիգորյանին օրինականացնել ինքնակամ կառուցված շինությունները:

4. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Լիանա Մուշեղի Գրիգորյանին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Լիանա Մուշեղի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» հոկտեմբերի 2021 թվականի N 780-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արման Հակոբի Միքայելյանի (ծնված՝ 1977 թվականի հուլիսի 1-ին), Անահիտ Վազգենի Ավագյանի (ծնված՝ 1949 թվականի հունվարի 15-ին), Մարգարիտա Հակոբի Միքայելյանի (ծնված՝ 1973 թվականի դեկտեմբերի 14-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 28-ի դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր–1 այգետարածքի 28–րդ թաղամասի թիվ 39 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի և սեփականության իրավունքի վկայագրեր, վավերացված 2015 թվականի հունիսի 3-ին, անհատ ձեռնարկատեր Մարգարիտ Նիտայանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 7-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Մարգարիտ Նիտայանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Անահիտ Վազգենի Ավագյանին, Արման, Մարգարիտա Հակոբի Միքայելյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր–1 այգետարածքի 28–րդ թաղամասի թիվ 39 հասցեի հողակտորում 1999 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տուն՝ 199,03 քառ.մետր, թիվ 2 օժանդակ շինություն՝ 3,6 քառ.մետր արտաքին մակերեսներով (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացիների դիմումում նշված և անհատ ձեռնարկատեր Մարգարիտ Նիտայանի կողմից չափագրված և հաստատված հողամասի հատակագծում նշված տարեթիվը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Անահիտ Վազգենի Ավագյանին, Արման, Մարգարիտա Հակոբի Միքայելյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր–1 այգետարածքի 28–րդ թաղամասի թիվ 39 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Անահիտ Վազգենի Ավագյանին, Արման, Մարգարիտա Հակոբի Միքայելյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր–1 այգետարածքի 28–րդ թաղամասի թիվ 39 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին այգետարածք, 28-րդ թաղամաս, թիվ 39:

2.Անահիտ Վազգենի Ավագյանին, Արման, Մարգարիտա Հակոբի Միքայելյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին այգետարածքի 28-րդ թաղամասի թիվ 39 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ 199,03 քառ.մետր, թիվ 2 օժանդակ շինությունը՝ 3,6 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անահիտ Վազգենի Ավագյանին, Արման, Մարգարիտա Հակոբի Միքայելյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» հոկտեմբերի 2021 թվականի N 779-Ա

## ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ՝ ԱՅԳՈՒ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գայանե Դերենիկի Ջրբաշյանի (ծնված՝ 1976 թվականի հունիսի 7-ին) լիազոր անձ Սոնյա Ժորայի Առաքելյանի (ծնված՝ 1978 թվականի սեպտեմբերի 7-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով Գայանե Դերենիկի Ջրբաշյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում գտնվող 0,1367 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2506427 վկայական, տրված 2008 թվականի հունվարի 18-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 9-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծը), որտեղ հիմնել է այգի, ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգու փոխադրելու մասին:

Ելնելով վերը նշվածից և հաշվի առնելով այն, որ նշված հատվածը ըստ գնահատման գտնվում է Ջրվեժ գյուղի 4-րդ գոտում և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1.Գայանե Դերենիկի Ջրբաշյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում գտնվող 0,1367 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի կորիզավոր այգու:

2.Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Աշխատակազմի գլխավոր Հուսիկ Գրիգորյանին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման առաջին կետում նշված գյուղատնտեսական նշանակության վարելահողից ավելի բարձրարժեք հողատեսքի փոխադրելու նկատմամբ և պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 6
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» հոկտեմբերի 2021 թվականի N 778-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Հմայակ Արտաշեսի Բաղրամյանի լիազոր անձ Արտաշես Հմայակի Բաղրամյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 30-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0384-0089 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15092021-07-0079, տրված 2021 թվականի սեպտեմբերի 15-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ձորաղբյուր գյուղի ավագանու 2012 թվականի հուլիսի 2-ի թիվ 19-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Հմայակ Արտաշեսի Բաղրամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0384-0089 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 500,0 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Հմայակ Արտաշեսի Բաղրամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0384-0089 կադաստրային համարի 500,0 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին թաղամաս, թիվ 24:

3.Առաջարկել Հմայակ Արտաշեսի Բաղրամյանին՝ եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 141 150 (երկու միլիոն հարյուր քառասունմեկ հազար հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հմայակ Արտաշեսի Բաղրամյանի լիազոր անձ Արտաշես Հմայակի Բաղրամյանի որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«4» հոկտեմբերի 2021 թվականի N 777-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 714-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 10-ի «Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» թիվ 714-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 2-րդ կետում «նկուղային հարկով» բառերը փոխարինել «երկհարկանի» բառով:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Փառնակ Հնձարի Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«4» հոկտեմբերի 2021 թվականի N 776-Ա

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ և 124-րդ կետերով և հաշվի առնելով քաղաքացի Թաթոս Ժորժիկի Եփրեմյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Թաթոս Ժորժիկի Եփրեմյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 30-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողակտորում 2017 թվականին հունիսի 12-ի թիվ 8 շինարարության թույլտվությամբ տրված երկու բնակելի տների և ավտոտնակի կառուցման շինարարական աշխատանքները համաձայն փոփոխված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2022 թվականի ապրիլի 4-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Թաթոս Ժորժիկի Եփրեմյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«4» հոկտեմբերի 2021 թվականի N 775-Ա

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Գնել Խաչիկի Ավետիսյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 15 հասցեի հողակտորում 2020 թվականի մարտի 2-ի թիվ 12 շինարարության թույլտվությամբ տրված մանսարդային հարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գնել Խաչիկի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«4» հոկտեմբերի 2021 թվականի N 774-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Արթուր Սամվելի Մանուկյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Արթուր Սամվելի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 5 հասցեի տնամերձ հողակտորից բաժանված 2210,67 քառ.մետր մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 39-րդ փողոց, թիվ 5, 535,96 քառ.մետր մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 39-րդ փողոց, թիվ 7 և 520,62 քառ.մետր մակերեսով հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 39-րդ փողոց, թիվ 9:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Արթուր Սամվելի Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«4» հոկտեմբերի 2021 թվականի N 773-Ա

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Արսեն Բորիսի Բալայանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ զանգվածի 6-րդ թաղամասի թիվ 22 հասցեի հողակտորում 2021 թվականի հուլիսի 23-ի թիվ 121 շինարարության թույլտվությամբ տրված մանսարդային հարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արսեն Բորիսի Բալայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հոկտեմբերի 2021 թվականի N 772-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Շահեն Արտեմի Հարությունյանի (ծնված՝ 1937 թվականի մարտի 18-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի սեպտեմբերի 28-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ, Ջրվեժ-1 այգեգործական զանգված 25-րդ թաղամաս թիվ 21 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 1217482 վկայական, տրված 2003 թվականի նոյեմբերի 4-ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 23-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Շահեն Արտեմի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող ոտայքի մարզ, Ջրվեժ-1 այգեգործական զանգված 25-րդ թաղամաս թիվ 21 հասցեի հողամասում 2020 թվականին ինքնակամ կառուցել է թիվ 1 այգետնակ՝ կիսանկուղ 138,2 քառ.մետր, 1-ին հարկ 151,9 քառ.մետր, 2-րդ հարկ 183,9 քառ.մետր և թիվ 4 պարիսպ՝ 4,9 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա են 1 փակված պատուհան, 1 պատուհան՝ ձևափոխված բացվածքի, 2 պատուհան՝ ձևափոխված 1 բացվածքի, 1 պատուհան՝ ձևափոխված դռան, 1 պատուհան և 1 դուռ՝ ձևափոխված 1 բացվածքի, 1 դուռ փակված է և բացված է 2 դուռ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13, 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Շահեն Արտեմի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ջրվեժ-1 այգեգործական զանգված 25-րդ թաղամաս թիվ 21 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների և 1 փակված պատուհանի, 1 պատուհանի ձևափոխումը բացվածքի, 2 պատուհանի ձևափոխումը 1 բացվածքի, 1 պատուհան ձևափոխումը դռան, 1 պատուհանի և 1 դռան ձևափոխումը բացվածքի, 1 դռան փակումը և 2 դռան բացվածքի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Շահեն Արտեմի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ջրվեժ-1 այգեգործական զանգված 25-րդ թաղամաս թիվ 21 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 1-ին այգեգործական զանգված, 25-րդ թաղամաս, թիվ 21:

2.Շահեն Արտեմի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին այգեգործական զանգվածի 25-րդ թաղամասի թիվ 21 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 այգետնակ՝ կիսանկուղը 138,2 քառ.մետր, 1-ին հարկը՝ 151,9 քառ.մետր, 2-րդ հարկը՝ 183,9 քառ.մետր և պարիսպը՝ 4,9 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա 1 փակված

պատուհանը, 1 պատուհանը՝ ձևափոխված բացվածքի, 2 պատուհանը՝ ձևափոխված 1 բացվածքի, 1 պատուհանը՝ ձևափոխված դռան, 1 պատուհանը և 1 դուռը ձևափոխված՝ բացվածքի, 1 դուռը փակված և բացված 2 դուռը, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1 326 912 (մեկ միլիոն երեք հարյուր քսանվեց հազար ինը հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Շահեն Արտեմի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«1» հոկտեմբերի 2021 թվականի N 771-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Զվարթ Մանուկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0310-0005 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ տնտեսական շինության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Զվարթ Մանուկի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» հոկտեմբերի 2021 թվականի N 770-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Աղավնի Հովհաննեսի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0310-0007 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ տնտեսական շինության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Աղավնի Հովհաննեսի Նալբանդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» հոկտեմբերի 2021 թվականի N 769-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Հայկ Նորիկի Պետրոյանին տալ L=131 գծմ, D=20 մմ ջրագծի կառուցման շինարարության թույլտվություն՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 48-րդ փողոցի թիվ 4 հասցեում ջրամատակարարումն ապահովելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հայկ Նորիկի Պետրոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» հոկտեմբերի 2021 թվականի N 768-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի երկրորդ մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Շահեն Արտեմի Հարությունյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ-1 այգեգործական զանգվածի 25-րդ թաղամասի թիվ 21 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ իրականացրել է բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ, ***որոշում եմ.***

1.Շահեն Արտեմի Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Շահեն Արտեմի Հարությունյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

3.Պարտավորեցնել քաղաքացի Շահեն Արտեմի Հարությունյանին օրինականացնել ինքնակամ կառուցված շինությունները:

4. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Շահեն Արտեմի Հարությունյանին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Շահեն Արտեմի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 1
գ. Ջրվեժ